

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ ՖԲԱՆՍԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ
(XI—XIV ԴԴ.)

Գ. Լ. ԿԱՐԱԳՅՈՅԱՆ

Հայ-ֆրանսիական զրական առնչությունները բազմադարյան պատմություն ունեն և զրավել են զրականագետների ուշադրությունը: Մենք կփորձենք լուսաբանել մի հարց միայն՝ միջնադարյան ֆրանսիական դրականության մեջ Հայաստանի և հայերի կերպարի արտացոլումը, մասնավորապես՝ հայկական թեմայի ներթափանցման յուրահատկություններն ու զարգացումը:

Դեռևս 1902 թ., «Կորնելը և հայերը»¹ հոդվածում Յու. Վեսելովսկին գրել է. «Այն հարցը, թե ինչպես տարբեր ժամանակներում, տարբեր ազգերի դրոշները, լեպետ և հազվադեպ, իրենց հերոսներն են դարձրել հայերին, վաղ թե ուշ հավանաբար կդառնա հատուկ հետազոտության առարկա: Թող այս աշխարհը առաջին ավանդը լինի այդ հետաքրքրական հարցի ուսումնասիրման դրժումը»:

Անցել է 80 տարի: Այդ ընթացքում շատ զրականագետներ են անդրադարձել այս հետաքրքիր թեմային²: Սակայն նրանք սահմանափակվել են հիմնականում կլասիցիզմի ժամանակաշրջանի ֆրանսիական զրականության մեջ առկա հայկական թեմայի հետազոտությամբ, երբ զրականության մեջ առավելագույնս օգտագործվել են անտիկ ժամանակաշրջանից փոխառված հայկական պատմական թեմաները: Այսպիսով զրականագիտության մեջ հաստատվել է այն կարծիքը, ըստ որի ֆրանսիական զրականության մեջ հայկական թեմայի տարածման սկզբնականը XVII դարն է: Մինչդեռ Հայաստանը և հայերը այդ զրականության մեջ տեղ են գտել տակավին վաղ միջնադարում, ֆրանսիական զրականության սկզբնավորման և ձևավորման շրջանում: Հայկական թեմայի ներթափանցմանը մեծապես նպաստել են խաչակրաց արշավանքները, որոնց նպատակն էր, ինչպես հայտնի է, միավորել քրիստոնեական աշխարհը, համախմբել՝ մահմեդականներից «Տիրոջ գերեզմանը» փրկելու գործում:

Խաչակրաց արշավանքների շնորհիվ եվրոպացիները ոչ միայն ավելի մոտիկից ծանոթացան Պաղեստինին (ուր քրիստոնեական թագավորություն էր հիմնվել) և մահմեդական մշակույթին, այլև իմացան, որ լատինական և հունական աշխարհների կողքին Արևելքում կա նաև մեկ այլ քրիստոնեական

¹ Ю. Веселовский. Корнель и армяне.—«Кавказский вестник», Тифлис, 1902, № 7.

² Նույն տեղում, էջ 53—54:

³ Վ. Թերզիբաշյան, Հայ թեմաները համաշխարհային զրականության մեջ, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1946, № 7: Նույնի՝ «Հռոդամիզդ և Զենոբիա» պատմական դրամայի մասին, նույն տեղում, 1956, № 3, էջ 57—68: է. Պետրոսյան, Կլասիցիզմի շրջանի հայ-ֆրանսիական զրական կապերի պատմությունից, նույն տեղում, 1946, № 7, էջ 51—67, Herold Crébillon. Tacite et l'Arménie.—«Revue des Etudes Arméniennes» (REA), 1929, t. IX, f. I; F. Hérolld, Nicomède de Corneille et l'Arménie.—REA, 1923, t. III.

աշխարհ: Քանի որ ավանդական մտածողությամբ Արևելքը զուգորդվում էր մահմեդականության հետ, իսկ Հայաստանը քրիստոնեական երկիր էր, ուստի և վերջինս միջնադարյան ֆրանսիական գրականության մեջ պատկերվում է հրկակի բնույթով: Մի կողմից՝ Ֆրանսիայի և Հայաստանի կրոնական ընդհանրությունը, նրանց շահերի միասնությունը⁵ հանգեցնում է արևելյան աշխարհից Հայաստանի առանձնացմանը, նրա մերձեցմանը Արևմտյան Եվրոպային, մյուս կողմից՝ Հայաստանի աշխարհագրական մերձավորությունը մահմեդական երկրներին սխալ տպավորություն էր ստեղծում, թե Հայաստանը մահմեդական աշխարհի մի մասն է: Հայաստանի մասին պատկերացումների այդ հակասականությունը ակնհայտորեն նկատելի է ինչպես ֆրանսիական էպիկական պոեմներում, այնպես էլ ասպետական վեպում և պատմագրության մեջ:

Հիմնավոր կապ կա մեր երկրի ընկալման երկակիության և այն հանգամանքի միջև, որ Հայաստանը և հայերը այդ ժամանակաշրջանի ֆրանսիական գրականության մեջ են ներթափանցել ոչ միայն ինքնուրույն ճանապարհով, այլև արևելյան թեմայի համակարգում, իբրև այդ համակարգի բաղկացուցիչ մասը: Ֆրանսիական միջնադարյան գրականության մեջ Արևելքն առաջին հերթին առանձնանում է իր կրոնական երանդավորմամբ: Նրա ըմբռնումը հենվում է կրոնական մտապատկերի վրա, դիտվում որպես Քրիստոսի հայրենիք, քրիստոնեության օրրան: Անհավատներից նվաճված այդ երկիրը դառնում է քրիստոնյա ժողովուրդների հույսերի ու մտահոգության առարկա: Այդ է պատճառը, որ կրոնական հանգամանքը ֆրանսիական միջնադարյան գրականության մեջ արևելյան թեմայի մշակման հանգույցային հարցերից մեկն է: Այս առումով հետաքրքիր է ասպետների օրենսգիրքը՝ իբրև մարդկային օրինավոր վարքի նորմերի վերաբերյալ մի փաստաթուղթ: «Դու պետք է անհաշտ և անդադար պայքար մղես անհավատների դեմ», — ասում է այդ օրենսգրքի 6-րդ կետը:

Արևելքի և Արևմուտքի միջև, ռազմաստրատեգիական և առևտրական ճանապարհների խաչմերուկում տեղավորված Կիլիկյան Հայաստանը կարծեք թե գտնվում էր Եվրոպայի և Ասիայի տեսնական և մշակութային հարաբերությունների կիլակետում, որն էլ կանխորոշեց նրա տեսնական ու քաղաքական զարգացումը և պայմանավորեց նրա մասնակցությունը XI—XIII դդ. միջազգային իրադարձություններին: «Ֆրանկների հաստատած անդրծովյան իշխանություններին հարևան Փոքր Հայաստանի դիրքը, շահերի ընդհանրությամբ և անհավատներից փոխադարձաբար միմյանց պաշտպանելու անհրաժեշտությամբ պայմանավորված կապը սերեցին մեր ժողովուրդների մերձեցումը և անբաժանելի դարձրին այդ տարբեր քրիստոնեական քնակազարների պատմությունը», — գրում է Դյուլոդին «Histoire des croisades» (t. I Paris, p. 11) գրքի նախաբանում: Արևմուտքը, մասնավորապես Ֆրանսիան, շահագրգռված էր Կիլիկիայի համագործակցությամբ, որը մահմեդական Արևելքի դեմ պայքարում ի դեմս ֆրանկների դաշնակից տեսնելով՝ աջակցում էր խաչակիրներին հատկապես առաջին և երկրորդ խաչակրաց արշավանքների ժամանակ: Այն հարցը, թե խաչակրաց արշավանքները որքանով են նպաստել Կիլիկյան հայկական թագավորության ամրապնդմանն ու ծաղկմանը՝ վիճելի է և բանի որ այն դուրս է մեր ուսումնասիրության ոլորտից, մենք կանգ չենք առնի դրա քննարկման վրա: Նշենք միայն Գ. Միքայելյանի ամփոփիչ տեսակետը, ըստ որի խաչակիրների գալը այնուամենայնիվ կարելի է համարել այն բարեպատեհ պայմաններից մեկը, որ նպաստել է Կիլիկյան Հայաստանի ընդլայնմանը: «Առանց խաչակիրների գալու, հյուսիսից և հարավից թուրք-սելջուկներով և արաբներով շրջապատված Լեոնային Կիլիկիայի հայերի համար դժվար կլինեին ընդարձակել իրենց տարածքը» (Գ. Գ. Микаелян. История Киликийского армянского государства. Ереван, 1952, с. 133).

⁵ Leon Gautier. La Chevalerie. Paris, 1884, p. 93.

Արաբների կողմից Ֆրանսիայի գրավման վտանգը, որը վերացավ Պուատյեի ճակատամարտում Կառլոս Մարտելի հաղթանակով (732 թ.), ֆրանսիացի ասպետների մասնակցությունը իսպանական ռեկոնկիստին, խաչակրաց արշավանքներով ծնունդ առած տրամադրությունները՝ ահա այսպիսին էր պատմական այն իրադրությունը, որով պայմանավորված էին էպիկական հերոսապատմի հակամահմեդական բնույթն ու ուղղվածությունը միջնադարյան Ֆրանսիայում: «Սիրելի» Ֆրանսիայի համար սարակինոսների դեմ անվեհեր պայքարի թեման արդեն տեղ է գտել միջնադարի նշանավոր վիպական հուշարձանում՝ «Ռոլանդի երգը» պոեմում:

Տիրոջ գերեզմանի ազատագրման, մահմեդականների դեմ անհաշտ պայքարի թեման առավել լայնորեն է ներկայացված ֆրանսիական էպիկական պոեմներում (*chanson de geste*), հատկապես՝ խաչակրաց արշավանքներին նվիրված շարքում (*cycle de croisade*): Այդպիսին են, օրինակ, «Երգ Անտիոքի մասին», «Երգ Անտիոքի և Երուսաղեմի մասին», «Երուսաղեմի առումը», «Կառլոսի ուղևորությունը Կոստանդնուպոլսից Երուսաղեմ», «Խաչակրաց արշավանքի մասին», «Կարապի ասպետը», «Սերուրցի Բոդուինը», «Գոդեֆրուայի մանկությունը» և այլն: Այս պոեմներում հեթանոսների՝ հանդեպ ատելությունը երբեմն հասնում է կատաղության, ջղածղության... «Եթե մենք նույնիսկ զրախտում լինենք, — բացականչում է XII դարի անողորմ լինվորը, — մենք կիջնենք այնտեղից սարակինոսների դեմ պայքարելու համար»⁷: Գոդեֆրուա դը Բուլոնի ուղեկիցները Երուսաղեմի մատուցներում բացականչում են. «Եթե Երուսաղեմի պարիսպները անգամ պողպատից լինեն, մենք կկրծենք դրանք»⁸: Իսկ «Խաչակրաց արշավանքի մասին» երգում XII դարի բանաստեղծ Կոնոն դը Բետյունը գոչում է.

Հանուն մեզ Քրիստոսը, սիրով լի,
Ջոհվեց այն հողում, որ թուրքին է արված.
Հեղեղենք դաշտերը թշնամու արյամբ,
Ինչ ոչ մեր պատիվը հավերժ խալտառակված է⁹:

Արևելքի ըմբռնումը միջնադարյան ֆրանսիական լրականության մեջ (XI—XIII դդ.) փոփոխություններ չի կրում: Պարզապես խաչակրաց արշավանքների հետևանքով, որոնց շնորհիվ հնարավոր եղավ Արևելքի հետ անմիջական շփումը, հարստանում են Արևելքի ժողովուրդների կենցաղի, սովորությունների, հավատալիքների մասին գիտելիքները: էպիկական շարքերի¹⁰ տարբեր պոեմներում Արևելքը հանդես է գալիս որպես հաստատուն մի կարգ: Սակայն Արևելքի ընկալումը «կարողինգյան» շարքում քիչ բանով է տարբերվում «խաչակրաց» շարքում տեղ գտած նրա ընկալումից: Այստեղ զգալի է էպիկական ավանդույթի կայունությունը, գիտակցության մեջ

6 Ֆրանսիական էպոսում հեթանոս բառը կիրառվում էր մահմեդական իմաստով:

7 L. Gautier. La Chevalerie, p. 71—72.

8 Նույն տեղում:

9. «Песнь о крестовом походе». — Б. И. Пуришев. Зарубежная литература средних веков. М., 1974, с. 243.

10 Ֆրանսիական էպիկական պոեմներում՝ ժեստերում, առանձնացվում են հետևյալ հիմնական շարքերը. «Թագավորական կամ կարողինգյան», «Խաչակրաց», «Գարեն դը Մոնպլանի ժեստը», «Գիլյոմ դ' Օրանժի ժեստը», «Գոնոն դը Մալանսի ժեստը»:

արմատացած «յուրային—օտար» կայուն հասկացությունը՝ այն գլխավոր հակադրությունը, որի վրա կառուցվում է աշխարհի ըմբռնումը: Ֆրանսիական հերոսական էպոսի նկատմամբ կիրառելի է «յուրային—օտար» հակադրության կրոնական մեկնությունը, որն ի վերջո հանգում է «քրիստոնյա—ոչ քրիստոնյա» ձևակերպմանը:

«Քրիստոնյա — ոչ քրիստոնյա» հակադրությունը, — գրում են Վ. Վ. Իվանովը և Վ. Ն. Տոպորովը, — կառուցված է ավելի հին հակադրության տիպով՝ սեփական կրոնական-ծիսական խմբին պատկանող—օտար կրոնական-ծիսական խմբին պատկանող, ըստ որում երկրորդ անդամը մեկնաբանվում է որպես մարդկային հասարակությունից առհասարակ լիովին մերժված»¹¹: Նթե մահմեդականներին «օտար» կոչելը կասկածներ չի հարուցում, ապա Հայաստանը և հայերը այդ համակարգում յուրատեսակ և հակասական գնահատական են ստանում:

Միջնադարյան ֆրանսիական զրականության մեջ պատմաժամանակագրական տեսանկյունով հայկական թեմայի ներթափանցման պրոցեսի ուսումնասիրության ընթացքում, ժամանակային սանդղակով բարձրանալուն զուգընթաց, նկատելի է Հայաստանի առավել կայուն, որոշարկված, ճիշտ ըմբռնման ձգտումը, վերակողմնորոշումը, Հայաստանի առանձնացումը մահմեդական աշխարհից, «օտար» սահմանումից «յուրային» սահմանման անցնելու միտում: Ամեն մի օտար իր մեջ կրում է անհայտության, անորոշության մի մասնիկ և հետևաբար, վերացական է և հաճախ չի համապատասխանում իրականությանը: Օտարի (տվյալ դեպքում՝ Ֆրանսիան Հայաստանի) հետ առավել սերտ շփումների ժամանակ նկատվում է կազմավորված ստերեոտիպի վերաիմաստավորում: Նթե ֆրանսիական էպիկական պոեմներում (XI—XIII դդ.) մահմեդական Արևելքի ստերեոտիպը չի փոփոխվում, ապա Հայաստանի ընկալման մեջ նկատվում է ավանդական մտածողության բեկում, որ հանգեցնում է Հայաստան և հայեր ըմբռնման ձևափոխմանը: Արևելքի բաղկացուցիչ մաս դիտվող Հայաստանի առանձնացումը իր հերթին հանգեցնում է Արևելքի ընկալման ավանդականության որոշակի խախտման, որը, սակայն, չի փոխում այդ ավանդականության ընդհանուր ուղղվածությունը:

Այժմ ավելի կոնկրետ նյութի հիման վրա ծանոթանանք հայկական թեմայի ընկալման էվոլյուցիային, որն արտացոլում է էթնիկական ստերեոտիպի փոփոխությունը:

«Ռոլանդի երգը» արտացոլում է 778 թ. պատմական իրադարձությունները՝ Կառլոս Մեծի ջոկատի պարտությունը բասկերի դեմ ճակատամարտում: Վերաիմաստավորելով այս դեպքերը, վիպերգը պատմում է ոչ թե բասկերի, այլ մավր մահմեդականների դեմ ֆրանկների ճակատամարտի մասին: «Ռոլանդի երգը», որն ընդունված է համարել ֆրանսիական առաջին ազգային զրական հուշարձանը, առաջին ստեղծագործությունն է, որտեղ մենք հիշատակություն ենք հայտնաբերել հայերի մասին: Էմիր Բալիզանի զորքերի նկարագրության մեջ կարդում ենք. «Հայերին և մավրերին վերցնում են վեցերորդ գունդը»¹²: Կամ՝

¹¹ В я ч. В с. И в а н о в, В. Н. Т о п о р о в. С л а в я н с к и е я з ы к о в ы е м о д е л и р у ю щ и е с е м и о т и ч е с к и е с и с т е м ы. М., 1965, с. 158.

¹² «Песнь о Роланде». М., 1974, с. 122.

Դուք մարտի կտանեք իմ գնդերը,
Բայց ես ինձ մոտ կպահեմ լավագույն երեքին՝
Խիզախ հայերին, թուրքերին,
Մալալոզական գունդը, ուր յուրաքանչյուրը հսկա է,
Նվ օքսիդյան գունդը կավելացնեմ դրանց¹³։

Հայերն այստեղ հանդես են դալիս որպես քրիստոնյաների հակոտնյա, որպես «օտար», որ կարելի է բացատրել այդ շրջանում Հայաստանի հետ անմիջական շփումների բացակայությամբ և դրանից բխող օբյեկտիվ ինֆորմացիայի բացակայությամբ։ Առօրեական մտածողությանը հատուկ «յուրային» սեփական և «օտար» (տվյալ դեպքում հայ) ժողովուրդների մասին պատկերացումը մարմնավորող էթնիկական ստերեոտիպը կառուցված է տարածքային ընդհանրության, աշխարհի աշխարհագրական բաժանման վրա։

Հայերի մասին համանման տեսակետ մենք գտնում ենք «Նարբոնցի էյմերիի մահը» պոեմում (XII դարի վերջ), ուր պատկերվում է հեթանոսներից գրավված Նարբոն քաղաքի ազատագրումը էյմերիի կողմից։ Հայերն այս պոեմում հղբայրացած են հեթոկպացիների, թուրքերի հետ։

Կառլոսն էյմերիին ուղարկեց Իսպանիա...
...
Նա ամայացրեց սարակինոսների թագավորությունը,
Ավերեց քաղաքներն ու գրավեց տասնհինգ ամրոց։
Այնտեղից շատ կանանց ու արանց գերեց՝
Թուրքերի, հեթոկպացիների... և հայերի¹⁴։

Հայերը երբեմն հանդես են գալիս որպես էմիրներ, մահմեդական իշխաններ։

Նա հարվածեց Օրկանասին՝ հայ էմիրին,
Սուրը միեց նրա մեջ¹⁵։

«Մենե» պոեմում (XII դար) հայերը ներկայացված են որպես հեթանոս և անհավատ։ Պոեմը պատկերում է էմիր Գալաֆրի արքունիքում (Իսպանիա, Տոլեդո) Կառլոսի գտնված ժամանակը։ Այստեղ նա ծպտված է եղել Մենե անվան տակ։ Կառլոսը (Մենեն) իբրև Գալաֆրի կողմնակից մարտնչում է Բարամանդի¹⁶ դեմ և սպանում է վերջինիս։ Գալաֆրը որպես պարզև իր զստերը, որը քրիստոնեություն է ընդունում, կնույթյան է տալիս Մենեին։ Հետևյալ հատվածում նկարագրված է պարտված Բարամանդի զորքերի նահանջը։

Ազահ անհավատները փախուստի դիմեցին՝
Սլավակները, հայերը, Turcoples և նուբիացիները¹⁷։

Կարելի է բազմաթիվ օրինակներ բերել, ուր հայերը համարվում են մահմեդական աշխարհի ներկայացուցիչներ։ Ժոնգլյորները հայերին երբեմն հիշատակում են սաքսերի առաջնորդ Վիտինդին¹⁸ (Witikinde) զորքի մեջ։ «Սաքսերի երգը» պոեմը արտացոլում է Կառլոսի պայքարը հեթանոս սաք-

¹³ Նույն տեղում, էջ 124։

¹⁴ «La mort Aymeri de Narbonne». տե՛ս F. MacIer. L'Arménie et la France à travers l'art et l'histoire. Paris, 1917, p. 15.

¹⁵ Նույն տեղում, էջ 16։

¹⁶ Հենրի Գոտիեն Ենթադրում է, որ Galafre-ն Halaf-ի աղավաղումն է, իսկ Bramante-ն՝ Abderrahman-ի (տե՛ս L. Gautier. Les Epopées françaises, t. III. Paris, p. 32.

¹⁷ «Mainet» — «Romania», 1875, IV, pp. 305—337.

¹⁸ Witikinde-ն Guiteelinde-ի ֆրանսիականացված ձևն է։

սերի դեմ: Սաքսերն իրենց առաջնորդ Վիտիկինգի գլխավորությամբ պարտություն են կրում: Պոեմն ավարտվում է սաքսերի քրիստոնեություն ընդունելով և Սիբիլայի՝ սպանված Վիտիկինգի կնոջ, ու Բոդուինի՝ հռչակավոր Ռուանդի եղբոր, ամուսնությամբ: Հայերն այստեղ հունդարների, պարսիկների, դանիացիների, ռուսների հետ մարտնչում են իբրև Վիտիկինգի կողմնակիցների:

Վերը հիշատակված պոեմներում¹⁹ «մենք»-ի գիտակցումը ձեռք է բերվում հակադրության միջոցով. «մենք՝ քրիստոնյաները» նրանք են, ովքեր «նրանք՝ մահմեդականները» չեն, այն մարդիկ, որ «նրանք» մահմեդականները չեն, իսկական մարդիկ են: Սակայն աստիճանաբար նկատվում է Հայաստանը և հայերին մահմեդական աշխարհից առանձնացնելու, «մենք քրիստոնյաներ ենք» հասկացության մեջ ներառնելու միտում: Այս վերաիմաստավորումը պայմանավորված էր պատմական նոր հանգամանքներում նրան կուսմամբ քաղաքական նոր կողմնորոշմամբ և համապատասխան տեղեկությունների կուտակմամբ, Հայաստանի մասին պատկերացումների կոնկրետացմամբ: Հայաստանն այլևս վերացական ըմբռնում չէ, այլ կոնկրետ պատմական, աշխարհագրական հասկացություն: Մյուս կողմից, ընդհանուր քաղաքական շահերով միավորված Հայաստանն ու Ֆրանսիան միավորվում են այնքանով, որքանով երկուսն էլ տոգորված են անհավատների հանդեպ ունեցած հար և նման զգացումներով:

Ֆրանսիական միջնադարյան գրականության մեջ Հայաստանի և հայերի բնկավման աստիճանական զարգացման առավել համոզիչ արտահայտությունը միջնադարում լայն տարածում գտած «Հանտոնացի Բյովենի» սխրանքների մասին ասքերի զանազան տարբերակներն են: Բյովենի ասպետական վեպն առաջացել է միջնադարյան Ֆրանսիայում (XII դարում), խաչակրաց արշավանքների դարաշրջանում և համանվիրողական տարածում է ստացել²⁰: XII—XIII դդ. ընթացքում այն ժողովրդականություն էր վայելում Եվրոպայի շատ երկրներում՝ Անգլիայից, Նիդեռլանդներից, Իսլանդիայից մինչև Իտալիա և Դուբլոկի²¹:

¹⁹ Քննարկված էպիկական պոեմները հիմնականում պատկանում են «Թագավորական» շարքին: Հայերին մահմեդականների հետ կապելը բացատրվում է ոչ միայն այս պոեմների ստեղծման ավելի վաղ շրջանով և, դրա հետ կապված, մեր երկրի ու ժողովրդի մասին անտեղյակությամբ: Այդ հարցում հավանական է, որ դեր է խաղացել նաև Հայաստանի, որպես մահմեդական աշխարհի բաղկացուցիչ մասի ընկալումը՝ պայմանավորված հայերի հասարակական-քաղաքական գործունեության բնույթով: Այնչափ, օրինակ, նշում է Կառլոսի մոտ Հարուն ալ Ռաշիդի դեսպանության մեջ հայերի ներկայության փաստը: Վերջինս էլ հանգեցրել է Արևելքի երկու ժողովուրդների՝ հայերի և արաբների նույնացմանը. նրանք ընկալվել են որպես մահմեդական միասնական ճամբարի ներկայացուցիչներ (տե՛ս Գ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 456—457):

²⁰ Վ. Մ. Ժիրմունսկին գտնում է, որ «Հանտոնացի Բյովեն» էպոսից ասպետական վեպին անցման աստիճանն է: «Հին ֆրանսիական էպոսը առավել վառ կերպով է պատկերում հերոսական էպոսի վերածումը արկածախնդրական տիպի ասպետական վեպի, որը մոտենում է արթնության վեպին, ըստ որում „Beuves d'Hanstone“ իր ֆրանսիական և իտալական խմբագրություններում, ոչ միայն արձակ, այլև արդեն չափածո, պատկանում է հենց այս տիպի ասպետական վեպերին» (տե՛ս В. М. Жирмунский. Эпическое творчество славянских народов и проблема сравнительного изучения эпоса.—«Сравнительное литературоведение», Л., 1979, с. 268):

²¹ Ռուսաստանում «Բյովեն արքայազնի» պատմությունը հայտնի է եղել XVI դարից ոչ ուշ (տե՛ս В. Д. Кузьмина. Рыцарский роман на Руси. М., 1964, с. 21): Դեռ Ա. Ն. Վենետիկսկին ցույց է տվել, որ «Բյովենի պատմության» բելոռուսական (պոդնանյան) ձեռագիրը ծագում է Բյովենի մասին պոեմի վենետիկյան տեքստերից:

Այժմ, ըստ ժամանակագրական կարգի, կանգ առնենք այս ասպետական վեպի մի քանի տարբերակները²² վրա, որ թույլ կտա մեզ հետևելու Հայաստան և Հայեր հասկացությունների ձևափոխման ընթացքին:

«Հանտոնացի Բյովեն» վեպը սյուժետային խթին կառուցվածք ունի: Այն ղարգանում է միաժամանակ մի քանի ուղղությամբ: Վեպում կարելի է առանձնացնել տարբեր պատմողական շերտեր: Առաջինը կապված է Հանտոնի տիրակալի սպանության հետ, երկրորդը՝ նրա որդու վրեժխնդրության, երրորդը՝ կրոնական զգացումների ոլորտին է պատկանում, չորրորդը՝ սիրային ինտրիգ է: Հիմնական բովանդակությունը հետևյալն է. Գերմանիայի կայսր Դոոնը (Doon) որսի ժամանակ սպանում է Հանտոնի տիրակալին վերջինիս կնոջ դրդամբ և ամուսնանում է նրա հետ: Հանտոնի տիրակալի որդին՝ Բյովեն, վրեժխնդիր է լինում հոր համար և փորձում է սպանել խորթ որդ, որի համար պատժվում է: Մայրը հրամայում է որդուն վաճառել: Նրան գնած առևտրականները երկար դեգերումներից հետո մոտենում են ինչ-որ երկրի: Այդ երկրի թագավորը գնում է Բյովենին: Անդրադատանք միայն պատմության այս մասին, քանի որ վեպի սյուժեի հետագա զարգացումը դուրս է մեր քննության առարկայի ոլորտից:

Վաճառականները Հանտոնցի Բյովենին բերում են ինչ-որ երկիր... Վեպի ժամանակային առումով առաջին՝ անգլո-նորմանդական տարբերակում այդ երկիրը Եգիպտոսն է (Que en Egipte leur nef arriverent): Նրա թագավորի անունը Hermin է, որը հին ֆրանսերենում նշանակում է հայ: Երկրի բնակիչները կոչվում են Hermins՝ հայեր: Վերջիններս հեթանոս են և երկրպագում են Mahun աստծուն: Վեպի ավելի ուշ շրջանի ֆրանսիական տարբերակում Բյովեն վաճառվում է Hermenie (Հայաստան) երկրում, որտեղ իշխում է Hermin-ը (հայը): Վերջինս արդեն ոչ թե հեթանոս է, ինչպես նախորդը անգլո-նորմանդական տարբերակում, այլ քրիստոնյա: Ֆրանկո-իտալական խմբագրության համաձայն, որ Վենետիկում պահվող ձեռագրից հրատարակել է Ռայան, առևտրականները Բյովենին վաճառում են Armenion-ին՝ Հայաստանի թագավորին, որի մայրաքաղաքը Armenia la cita-ն է: Թագավորը, ինչպես նաև ժողովուրդը, քրիստոնյա են, ֆրանկների կրոնակից եղբայրները:

Անգրեա Բերբերինոյի «Reali di Francia»-ի²³ 5-րդ գիրքը Բյովենի պատմության ավելի ուշ շրջանի (XIV դարի վերջ—XV դարի սկիզբ) արձակ շարադրանքն է: Այս գիրքը մեծ մասսայականություն էր վայելում: Ստեղծագործության հիմնական հետաքրքրությունը հեթանոսային տարրերով գունազարդված ասպետական-արկածախնդրական ֆաբուլայի և սիրային ինտրիգների միահյուսումն էր: Այս տարբերակում Հայաստանը վերացական երկիր չէ: Հեղինակը փորձում է տալ նրա աշխարհագրական տեղագրման նկարագրությունը: Ահա վաճառականները Բյովենին Իսպանիայից Ջիբրալթարով տանում են Մարոկկո, ապա Եգիպտոս, Կիպրոս և վերջապես նրանք «տեսան Փոքր

²² Տարբերակները վերցրել ենք՝ Gedeon Huet. Certaines versions de Bovon de Hantone.—REA, 1920, t. I, f. I.

²³ Reali di Francia-ն (Ֆրանսիայի թագավորական սուլնը) բովանդակում է հին ֆրանսիական «կարոլինգյան» էպոսի հիմնական նյութը: Դրան կցված են «Aspremonte»-ն (երիտասարդ Ռուլանդի մասին վեպը), «Spragna»-ն (Կառլոս Մեծի և Ռոնսեսվայլյան ճակատամարտի պատմությունը), «Nerbonesi» (Գիյոմ դ' Օրանժի շարքը), «Uggeri il Danese» (Օժյե Դանիացի):

Հայաստանը²⁴ (Ermenia Minore) և ցանկացան ճանապարհորդել այնտեղ, քանի որ նրանցից ոմանք այս երկրից էին, և որովհետև Ermenias²⁵ անունով քաղաքը սահմանակից էր Կիլիկիային»²⁶:

«Հանտոնացի Բյովեն» վեպի ղանադան ժամանակներում զրված տարբերակների օրինակի հիման վրա մենք հետևեցինք Հայաստանի և հայերի ընկալման փոխակերպմանը: Այդ փոխակերպումը հանգեցնում է «յուրային—օտար» հակադրության խախտմանը, որն իր հերթին երկի մեջ նոր սյուժետաստեղծիչ տարրի մուծման հիմք է տալիս: Սկզբնական տարբերակի փոխակերպմանը զուգընթաց Հայաստանն ավելի ու ավելի է ձեռքբերում «օտար—բացասական» գեղատեսչական չափանիշից և, կարելի է ասել, դառնում է «յուրային—ղրական» սահմանմանը նույնական: Հայաստանի ընկալման փոփոխությունն զգացվում է ոչ միայն կրոնական ընդհանրության ոլորտում (հավատքային հակադրություններից վերածվում են հավատակիցների), այլև սիրային ինտրիգների բնագավառում: Այսպես, հեթանոս Hermin-ի դստեր վարքը տարբերվում է քրիստոնյա Hermin-ի դստեր վարքից: Եթե հեթանոսուհի Josianne-ն բոլոր միջոցներով, մինչև իսկ բռնություն ձեռնարկելով, հորձում է ամուսնանալ Բյովենի հետ, ապա քրիստոնեուհի Josianne-ի կեր-

24 Ամենայն հավանականությամբ Փոքր Հայաստան տերմինը այս տեքստում հոմանիշ է Կիլիկիային: Ծիշտ է, հին աշխարհագիրները Փոքր Հայք (Armenia Minor) էին կոչում Հայաստանի արևմտյան մասը՝ նփրատից արևմուտք և Կապադովկիայից հյուսիս, սակայն միջնադարյան Արևմուտքի մատենագիրները Փոքր Հայաստան էին անվանում Կիլիկիան հայկական թագավորությունը: Օրինակ՝ Մարկո Պոլոյի ուղեգրության (1271—1295) մեջ կարդում ենք. «Կա երկու Հայաստան՝ Մեծ և Փոքր... Նրանք (հայերը—Գ. Կ.) ունեն մի քաղաք ծովի վրա, որ կոչվում է Լայաս (իմա՝ Այաս—Գ. Կ.), որտեղ նրանք մեծ առևտուր են կատարում» (տե՛ս «Ուղեգրություններ», Երևան, 1932, հ. Ա, էջ 44): Փոքր Հայաստան ասելով Մարկո Պոլոն նկատի ունի Կիլիկիան: Հավանաբար And. Berberino-ն օգտվել է Մարկո Պոլոյի գրքից, որը մեծ մասնաշաղկապություն էր վայելում:

25 Ermenias քաղաքը հետազոտվող ժամանակաշրջանի աշխարհագրական քարտեզի վրա բացակայում է: Այն հիշում է միայն Berberino-ն: Ամենայն հավանականությամբ, հեղինակը փոխզիջողական որոշում է գտել. Կիլիկիան Հայաստանի կարևորագույն նավահանգիստ Այաս քաղաքի անունը (որի միջոցով էր կատարվում առևտրական փոխանակությունը Արևելքի և Արևմուտքի միջև) նա միավորել է նախորդ պատումներում լայն տարածում գտած առասպելական Hermin անվան հետ: Ermenias ձևը, այսպիսով, ստացել է առավել կոնկրետ աշխարհագրական գունավորում:

26 Հայ գրականագետները ուշադրություն են դարձրել «Բյովեն արքայազնի» պատմությանը, սակայն, դժբախտաբար, հետազոտողները լոկ ի միջի այլոց են անդրադարձել Բյովենի մասին ռուսական ասքում Հայաստանի հիշատակությանը: Ս. Արեշյանը սահմանափակվում է նշելով միայն այն փաստը, թե «Բյովեն արքայազն» պատմվածքի դործողությունը կատարվում է «Հայկական թագավորությունում» (տե՛ս С. Арешян. Армянская печать и царская цензура. Ереван, 1957, с. 63—64). Լ. Մելիքսեթ-Բեկին իր «Древняя Русь и Армения» հոդվածում («Труды института языка АН Армянской ССР», Ереван, 1957, с. 108), վարկած է առաջադրել, ըստ որի հիշված «ծովափնյա հայկական թագավորությունը» ակներևաբար Կիլիկիան թագավորությունն է: Կ. Գրիգորյանը բավական կասկածանքով է վերաբերվում Մելիքսեթ-Բեկի այն ենթադրությանը, թե Զենզեվիայի Орменское կամ Арменское թագավորությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ Կիլիկիան Հայաստանը: «Դժվար է խոսել հեթանոսային սյուժեի պատմական հիմքի մասին, բայց և այնպես Լ. Մ. Մելիքսեթ-Բեկը ենթադրում է, որ ռուսական ասքում խոսքը Կիլիկիան Հայաստանի մասին է» (К. Григорян. Из истории русско-армянских литературных и культурных отношений. Ереван, 1974, с. 28). Քանի որ «Բյովեն արքայազն» պատմության ռուսական տարբերակը թարգմանություն է բելոռուսերենից, իսկ վերջինս ծագում է վենետիկյան տեքստերից, որոնցում իրադարձությունները, ինչպես համոզվեցինք, տեղի են ունենում Կիլիկիայում, ապա Մելիքսեթ-Բեկի ենթադրությունը հաստատվում է:

պարը զգալիորեն մեղմացված է: Նա միայն համոզում է Բյովենին ծաղկաշղթ-թա նետել իր ոտքերի տակ՝ ի նշան ամուսնական համաձայնության: Հեթանոս հայն իր տեղը զիջում է քրիստոնյա հային: Սակայն Ֆրանսիայի դրողներն ու բանաստեղծները չեն սահմանափակվում հայերին քրիստոնեության հետ հարաբերակցելով: Հայերը ներկայանում են որպես ֆրանկների դաշնակից, ֆրանկների և Արևելքի ժողովուրդների միջև միջնորդ, թաքմանիչ: «Անտիոքի էրզը» պոեմում ֆրանկները, ինչպես և Անտիոքի էմիրները բանակցություններ վարելու համար դիմում են հայերի օգնությանը: Պոեմում կարդում ենք.

Սարակինոսների էմիրը կանչեց երկուսին,
Մեկը հույն էր, իսկ մյուսը՝ հայ.

• Նրանք լեզուներին բաջատեղյակ էին,
Նա նրանց ուղարկեց ֆրանկների մոտ²⁷:

Հայ թագավորներից առավել համակրանք և ժողովրդականություն է վայելում ոմն Բյովոն Տարսոնցի (Beuvon de Tarse, Beuvon le Tarsien, Beuvon d'Erminie): Մեզ. դժբախտաբար, չհաջողվեց պարզել, արդյոք Բյովոնը իրական անձնավորություն է եղել, թե՞ ոչ: Եթե Բյովոն անունը օգտագործված լիներ միայն մեկ էպիկական պոեմում, կարելի կլիներ ենթադրել, թե այն ժողովրդի երևակայության արդյունք է: Սակայն հայ թագավորին մի քանի էպիկական պոեմներում այսպես անվանելը հիմք է տալիս կարծելու, որ նա մտացածին կերպար չէ: Բացառված չէ, որ Բյովոն անունը, որ լայն տարածում ուներ միջնադարում (հիշենք Բյովոնին «Ռուլանդի երգում», Բյովե դը Կոմարսիսին (Beuves de Comarsis), էյմերիի հինգ որդիներից մեկին՝ «Նարբոնցի էյմերի» պոեմում, վերջապես, վերևում քննարկված «Հանտոնացի Բյովե» վեպի հերոսին), Կիլիկիայի և Լևոն թագավորի անվան աղավաղումն է:

Հայ Բյովոնը՝ Melinus-ի²⁸ որդին, պոեմներում պատկերված է որպես ֆրանկներին նվիրված դաշնակից, լավ քրիստոնյա, սիրող և նվիրված ամուսին, բայց առաջին հերթին՝ քաջ զինվոր: «Ձեր թույլտվությամբ ևս կանեմ պատմությունը Drogon-ի և հզոր ու թագադրյալ²⁹ արքա Հայ Բյովեի, որին ուղեկցում էին 30000 խիզախ և փորձված վասալներ»³⁰, — կարդում ենք «Հյուսիս Կապետ» պոեմում (XIII դարի վերջ—XIV դարի սկիզբ), ուր սլաութով է մսագործի որդու մասին, որը ամուսնանալով կայսրուհի Բլանշֆլու-

²⁷ «La Chanson d'Antioche», t. II. Paris, 1848, p. 90.

²⁸ Ամենայն հավանականությամբ՝ Melinus-ը ոչ այլ որ է, եթե ոչ Կիլիկյան Հայաստանի թագավոր Մլեհը (1170—1175), ևս I-ի որդին և ևս II-ի հորեղբայրը: Պատմական դրականության մեջ Մլեհ անունը հաճախ հիշվում է որպես Մելիս (տես XI դարի բյուզանդացի պատմիչ Հովհան Կիննամի «Epitome rerum ab Ioanne et Alexio Comnenis gestarum». Bonnae, 1836, p. 286):

²⁹ Թրուվերների կողմից «թագադրյալ» մակդիրի օգտագործումը Բյովոնի բնութագրման համար ավելորդ անգամ հաստատում է վերը հիշատակված վարկածի ճշտությունը: Ինչպես հայտնի է, 1198 թ. Տարսոնում կայացավ Լևոն II-ի թագադրումը, որին թագ էին ուղարկել բյուզանդական կայսրը և Հռոմի պապը: Այդ թագադրումը լայն ճանաչում գտավ: Հակոբիկ-լանների պատրիարք Միքայել Ասորու ժամանակագրության մեջ, որն անձամբ ճանաչում էր Լևոնին, կարդում ենք. «Նրա համբավը տարածվեց ամբողջ աշխարհում և հույներն ու ֆրանկները շտապեցին նրան պսակել թագերով: Եվ նա հարուստ ու անվանի և օտարերկրյա ժողովուրդներին սարսափ ազդող արքա դարձավ»: Եվ ապա. «Եվ այսպես կրկին նորոգվեց Արամի որդու գահը և Հայկերի ու Սենեքերիմների թագը զրվեց նրանց արժանավոր ժառանգորդ Լևոնի զինին» (Г. Микаелян, նշվ. աշխ., էջ 174):

³⁰ «Hugues Capet». Paris, 1864, pp. 95—96.

րի դստեր՝ Մարիայի հետ, դառնում է Ֆրանսիայի թագավոր։ Այնուհետև՝ «Ծովով լողում էին հայտնի քրիստոնյաներ Վենետիկցի Դրոգոնը և Տարսոնցի Բյովոնը և 30000 ֆրանսիացիներ։ Նրանք ուղևորվում են Վենետիկ, Դրոգոնի կնոջ՝ Սարամոնտայի և անվանի տարսոնացու (Tarsien) կնոջ՝ Ֆլորայի հետևից, ապա նրանք կուղևորվեն Մեքքա, այս է նրանց մտադրությունը»³¹։

Հայաստանցի Բյովոնը հիշատակվում է նաև «Ռենան Մոնտաբան» (Renan de Montauban) էպիկական պոեմում։ Վերջինս պատկանում է այն պոեմների թվին, ուր Կառլոսի կերպարը այլևս նախկին վեհությունը չունի։ Նա այստեղ ներկայացված է իբրև խելացնոր և բռնակալ մի ժերուհի։ Պոեմի սյուժետային մի շերտում Կառլոսը պայքար է մղում անկախ և հպարտ Բյովոնի դեմ։ Չկարողանալով բռնի ենթարկել իրեն՝ Կառլոսը նենգություն և վարձու մարդասպանների ձեռքով սպանում է նրան Ֆլորիդոն (Floridon) անունով։ Պոեմում Բյովոնը ներկայանում է որպես Հայաստանի թագավոր և Ուսիայի իշխան. «Naime»³²-ը բարձրացրեց նրան և Հայաստանի թագավոր Բյովոնը, անմորում³³ իշխանը և Ռուսիայի կոմսն ասաց...»։

Միջնադարի մի շարք գրական հուշարձաններ զարմացնում են մեզ Հայաստանի մասին նրանց հեղինակների քաջատեղյակությամբ։ Այսպես, «Հռոմի մասին առաջին եղբերգը» պոեմում Հիլդեբրտ կավարդենցին (1056—1139), Հռոմի նախկին վեհությունն ընդգծելու նպատակով խոսում է նրա՝ որպես «հզեղ Արաքսին» դողացնող քաղաքի, մասին.

«Չկա քեզ հավասարը, Հռոմ, շնայած դու գրեթե ավերված ես, բայց նախկին վեհության մասին, դու ավերված էլ հայտնում ես։ Երկար տարիները զահավիժեցրին քո գոռոզությունը և ամբողջությունը Կեսարի, աստվածների տաճարներն այժմ ճահիճներում են թաղված. փլվել է հզորությունն այն, որ մի ժամանակ դող էր պատճառում ահեղ Արաքսին, որն այժմ դառնորեն ողբում է նույն այդ հզորությունը»³⁴։

Հայաստանի մասին այս հպանցիկ հիշատակության մեջ թաքնված են մեր երկրի պատմական ներկայի և անցյալի վերաբերյալ որոշակի գիտելիքներ։ Արաքսը՝ Հայաստանի դետրե, որին հասել էին Պոմպեոսն ու Տրայանոսը, այժմ ողբում է, որ նրա ափերին չեն հասել խաչակիրները։ Ըստ երևույթին, հեղինակը նկատի ունի 1045 թ. Անիի և Շիրակ գավառի գրավումը բյուզանդական զորքերի կողմից։

³¹ Նույն տեղում, էջ 236։

³² Գործող անձ, որ հանդես է գալիս «թագավորական» շարքի գրեթե բոլոր ժեստերում։ Նրան տրված է Կառլոսի իմաստուն, փորձված խորհրդատուի՝ Նեստորի դերը։

³³ Սովորաբար ֆրանսիական գրականության մեջ մահմեդականներին, սարակինոսներին անվանում են «մորուքավոր» (la gent barbee)։ Այդ անվանումը ֆրանսիական էպիկական պոեմներում գրեթե «ոչ քրիստոնյայի» հոմանիշ է դարձել։ Խաչակրաց արշավանքների պատմիչ Գիլոմ դը Տիբրի ժամանակագրության մեջ կարդում ենք. «Արևելքի ժողովուրդների մոտ, ներառյալ նաև հայերին ու հույներին, սովորույթ կար մորուք կրել...» (տե՛ս «Guillaume de Tyr et ses continuateurs», t. I. Paris, 1879, p. 397). Մորուք կրելու սովորությունը հայերի մեջ բազմադարյան պատմություն ունի. մորուքը իմաստության և հասուն տարիքի խորհրդանշն էր։ Զուգորդական մտածողությունը կապում էր ավանդույթների նմանությունը և բերում հետևյալ եզրակացության. Արևելքի բոլոր ժողովուրդները մահմեդականներ են, Արևելքի բնակիչները մորուքավոր են, մահմեդականները մորուքավոր են։ Բերված հատվածում պատահական չէ, որ Հայաստանի թագավորը ներկայանում է որպես անմորուս իշխան։ Հեղինակը դրանով ցանկանում է ընդգծել, որ հայ Բյովոնը ոչ թե մահմեդական է, այլ քրիստոնյա։

³⁴ «Памятники средневековой латинской литературы X—XII вв.». М., 1972, с. 210.

Հայերը հաճախ հանդես են գալիս ֆրանկների առաջնորդների խորհրդատուների դերում: «Կարապի ասպետը» պոեմում, որը մտնում է «խաչակրաց» շարքի մեջ և կապված է խաչակրաց առաջին արշավանքի իրադարձությունների հետ, հայը ֆրանկների թագավորին խորհուրդ է տալիս հարձակման անյնել. «Տեր, ասաց հայը, դուք շատ եք հուզվել, բայց բավական է նստեք ձեր արաբական նժույգը, և նրանք (մահմեդականները) կփախչեն այստեղից: Բարեկամ, պատասխանում է արքան, գուշատ ազնիվ սիրտ ունես»³⁵:

Ֆրուասարի «Ժամանակագրություններում» (Chroniques), որոնց իրենդիրն է հիշեցնել հարյուրամյա պատերազմի արշունալի շրջադարձերում ասպետական իդեալների մասին, սակայն առանց հուսալու դրանց վերածնունդը, կարգում ենք, թե ինչպես Հայաստանի Լևոն թագավորը Ֆրանսիայի և Անգլիայի թագավորներին առաջարկում է դադարեցնել երկպառակությունը և միավորվել թուրքերի դեմ՝ քրիստոնեական աշխարհը փրկելու համար: Նա համոզում է երկու կողմերին, որ պատերազմը անժամանակ է և հասնում է այն բանին, որ նրանք սկսեն բանակցություններ: Ժամանակագրի համակրանքը հայ թագավորի կողմն է: Նա նկարագրում է նրան հպարտ և անկաշառ: Անգլիայի թագավորը նրան նվերներ է ուղարկում, սակայն Լևոնը հրաժարվում է դրանք ընդունել: Նրա այցելության նպատակն է հայրենիքի փրկությունը: «Ոչ մի գրական ստեղծագործություն», — գրում է Ստասյուկևիչը, — չի կարելի դիտել իբրև երևակայության պարզ խաղ, բոլորովին ուղեղի հսկանքի քմահաճույք. այն իր ժամանակի բարքերի պատկերն է և մտքերի որոշակի տրամադրության նշան»³⁶: Հայերի կերպավորումը գրական երկերում իբրև ֆրանկների խորհրդատուներ արդյոք չի՞ հաստատում նման անձնավորությունների գոյությունը իրականում: Հիշենք թեկուզ Հեթում արքայազնին, Կոռիկոսի կոմսին, որը եկավ Ավինիոն, որտեղ շարադրեց «Թաթարաց մեծ խանի կյանքը» («La Flor des Estoires de la Terre d'Orient») առաջարկելով թաթարների խանի հետ դաշնակցած նոր խաչակրաց արշավանք կազմակերպել դեպի Արևելք: Ծրագրերը 1307 թ. ներկայացվեց Կղեմես V պապին և նրա հավանությանն արժանացավ: «Սուրբ երկրի» ազատագրման յուրօրինակ ծրագրերը հետաքրքրեց Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ Գեղեցիկին, որն իր օգնությունը խոստացավ այդ գործում: Գրքի, ինչպես նաև հեղինակի ժողովրդականությունը այնքան մեծ էր, որ Հեթումի անվան հետ Ֆրանսիայում և Իտալիայում լայն տարածում գտած մի ավանդություն է կապված: Այդ ավանդության հիշատակությունը մենք գտնում ենք ֆլորենտացի պատմիչ Ջովաննի Վիլլանիի մոտ (1280—1348): Վիլլանին հաղորդում է, որ Հեթումը, այլ վանականների և մի մեծ շքախմբի հետ ուղեկցում էր իր քրոջ՝ Հայաստանի արքայադստերը, դեպի Պարսկաստան, որտեղ տիրում էր մոնղոլ խան Հասանը. Հասանի և Հայաստանի արքայադստեր պատմությունը տրված է «1000 ու մեկ գիշերներ» հեքիաթների ոգով: «Երբ Հասանը կայսր դարձավ, — պատմում է ֆլորենտացի պատմիչը, — սկսեց որոնել ամենագեղեցիկ կնոջը: Նա սուրհանդակներ ուղարկեց ամբողջ Արևելքով մեկ: Հայ արքայադուստրը իր գեղեցկությամբ և ողջախոհությամբ գերադանցեց մյուսներին: Նա համաձայնեց դառնալ Հասանի կինը, պայմանով, որ նրան թույլ տրվի այդուհետև ևս

³⁵ «La Chanson du Chevalier au Cygne». Paris, 1877, p. 129.

³⁶ М. Стасюлевич. История средних веков в ее писателях и исследованиях новейших ученых. С.-Пет., 1907, с. 3.

հրկրպագել ամենագոր և ամենաբարի Հիսուս Քրիստոսին»³⁷։ Հայ արքայադուստրը Հասանի կինը դառնալով մի հրեշ է ծնում։ Իմաստունները եզրակացնում են, որ թագուհին խախտել է ամուսնական հավատարմությունը և պետք է այրվի իր երեխայի հետ։ Դատապարտյալը միայն հաղորդություն է խնդրում, իսկ երեխայի համար՝ մկրտություն։ Մկրտության ժամանակ հրեշը դառնում է մի գեղեցիկ մանուկ։ Մոր անմեղությունը ապացուցված է։ Երկրում տոն է հռչակվում։ Հասանը և ժողովուրդը քրիստոնյա են դառնում։

Այս ավանդությունը հետաքրքրական է ոչ միայն Հեթում պատմիչի անվան հետ կապված լինելու, այլև այն պատճառով, որ վկայում է Հայաստանի և հայերի գնահատման մի նոր աստիճանի մասին։ Հեթանոս հայից անցում է նկատվում դեպի քրիստոնյա հայը և վերջինից՝ քրիստոնեության ջատագով հայը։ Հեթումի ժողովրդականության հետքեր ենք գտնում նաև ավելի ուշ պատմական շրջանում, մասնավորապես Ռաբլեի «Գարգանտյուա և Պանտագրյուեն» վեպում։ Ռաբլեն Հեթում պատմիչին (ինչպես ինքն է անվանում Charton Armenien) դասում է Հերոդոտի, Պլինիոսի, Փիլոստրատոսի, Ստրաբոնի, այնուհետև Պիոս II պապի, Մարկո Պոլոյի հետ մի շարքում (գ. Գ, գլ. 3)։

Մենք փորձեցինք ցույց տալ Հայաստանի և հայերի ընկալման աստիճանական զարգացումը XI—XIV դդ. ֆրանսիական գրականության մեջ՝ չհավակնելով ընդգրկել միջնադարին վերաբերող ողջ նյութը։ Սակայն բերված փաստերն էլ բավական են ասելու, որ Հայաստանը և հայերը որոշակի տեղ են դրավում այդ գրականության մեջ և հարցն արժանի է գիտական ավելի բազմակողմանի քննության։

АРМЕНИЯ И АРМЯНЕ ВО ФРАНЦУЗСКОЙ ЛИТЕРАТУРЕ (XI—XIV вв.)

Г. Л. КАРАГЕЗЯН

(Резюме)

На основе анализа литературных памятников средневековья—эпических поэм, рыцарских романов, исторических хроник—в статье делается попытка проследить эволюцию образа Армении и армян во французской средневековой литературе XI—XIV вв. Процесс проникновения армянской темы во французскую литературу рассматриваемого периода характеризуется тенденцией к более устойчивому, точному восприятию Армении, переориентацией, вычленением Армении из мусульманского мира, тенденцией к переходу от восприятия ее как «чужой» к восприятию как «своей».

³⁷ G. Soulier. Le Moine Armenien Hétoüm et les apports d'Extreme Orient, REA, 1929, t. IX, f. I, p. 49.